

By hand

28940

RECEIVED MAR 4 1985



Armenian Church Of Our Saviour

Ս. ՓՐԿԻՉ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ, ՌԻՍԻՐԻ

Rev. Father Aved Terzian
Pastor

Փետրուար 27 1985

Գերաշնորհ

Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան, Առաջնորդ
Հայաստանեայց Եկեղեցւոյ Ամերիկայի
Նիւ Եորք

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Սուրբ Փրկիչ Եկեղեցւոյս տարեկան ծխական ժողովը գումարուեցաւ
Կիրակի Յունուար 27, 1985 յաւարտ արարողութեանց ժամը 10:45-ին
150 անդամներու մասնակցութեամբ: Քուէարկութեան մասնակցեցան 209
տրատու անդամներ: Եկեղեցւոյս տրատու անդամներուն թիւն է 524:

Օրինաւոր կերպով կատարուեցան ծխական խորհուրդի, Թեմական Պատ-
գամաւորներու, Ընտրողական Յանձնախումբի եւ Հաշուեքննիչ Յանձնախումբի
Ընտրութիւնները: Ծխական խորհուրդին վերընտրուեցան Տիարք՝ Արթր Եղ-
ժեան եւ Ասպետ Զարարեան իսկ սորրնտիր անդամներն են Տիարք՝ Չարլս
Շարուկեան, Լուիսիկ Ստեփանեան եւ Տօթ. Ռապրոդ Անուսպիկեան: Յա-
ջորդ առաւելագոյն քուէ ստացած անձն է Տիար Բիթրը նարոեան:

Համաձայն Առաջնորդարանէն ստացած մեր ուղղութեան, հաճեցէք նաեւ
ներփակ գտնել Եկեղեցւոյս Տեղեկագիրներու Պրակը, Անդամական ժողովին
ատենագրութիւնը, քուէարկութեան համարեա արդիւնքը, Եկեղեցւոյ ընդ-
հանուր ելեւմտական հաշուետուութիւնը եւ Առաջնորդարանէն ղրկուած
հարցարանը՝ պատասխանուած:

Յանձնելով վերոյիշեալ գրութիւնները Ձերդ բարձր նկատողութեան
կը սպասենք ծխական խորհուրդի, Թեմական Պատգամաւորներու, Ընտրող-
ական եւ Հաշուեքննիչ Յանձնախումբի ընտրութեանց վաւերացման:

Մտաչելով ի համբոյր Ձերդ Ս. Աջոյն.

Ի դիմաց ծխական Անդամական ժողովի
խոնարհաբար՝

S. Maniyan

Տ. Աւետ Քահանայ Թէրզեան
Նախագահ

